Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՄՆ «Աբովյանի հ.4 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի /13 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- *դիմում /Ձև 1/, մեկ լուսանկար 3x4 չափի,*
- *բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/,*
- *անձը հաստատող փաստաթուղթ,*
- *«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/*
- *ինքնակենսագրություն /ձև 5/*
- *այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատանքի իրավունքը հավաստող փաստաթուղթ,*
- *ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,*
- *հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/,*
- *որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

*Փաստաթղթերն ընդունվում են **սեպտեմբերի 7-ից մինչև սեպտեմբերի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:***

*Մրցույթը տեղի կունենա **սեպտեմբերի 22-ին՝ ժամը 14:00-ին,** ՀՀ ԿԳՄՄՆ Աբովյանի հ.4 ավագ դպրոցում, ՀՀ Կոտայքի մարզ, հասցեն՝ ք.Աբովյան, Ռոսիա 26:*

Տեղեկությունների համար զանգահարել՝ (098)90-93-93 հեռախոսահամարով: